ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

№335-Ա

«08» հունիսի 2026թ.

«ՋԻ ԷԼ ԹԻ» ՍՊԸ-ԻՆ
ՀՎՀՀ՝ 08275477
(ՀԱՍՑԵ ՀՀ,ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ,Ք.ՄԱՐՏՈՒՆԻ
ԳԵՏԱՓՆՅԱ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, 13-ՐԴ ՆՐԲ.,ՏՈՒՆ 4Ա)
ՀԵՌԱԽՈՍ (+374) 77520777
ԷԼ.ՓՈՍՏ՝ TIGRAN_HAK@MAIL.RU

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին պատկանող շենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հարկերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների կատարման թիվ «ՀՀՓԿ-ԳՀԱՇՁԲ-06/26» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

2026 թվականի ապրիլի 06-ին «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Ջի Էլ Թի» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Կապալառու) միջև կնքվել է «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին պատկանող շենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հարկերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների կատարման թիվ «ՀՀՓԿ-ԳՀԱՇՁԲ-06/26» ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ով նախատեսված «Օրացուցային գրաֆիկ»-ի համաձայն ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ին պատկանող շենքի 1-ին, 2-րդ, և 3-րդ հարկերի ընթացիկ վերանորոհման աշխատանքները Կապալառուն պարտավորվել է կատարել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 40 օրացուցային օրվա ընթացքում, այն է՝ մինչև 2026 թվականի մայիսի 15-ը ներառյալ: Այնուհետև, 07.05.2026թ-ին կնքված Հ1 համաձայնագրով երկարաձգվել է Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը 20 օրացուցային օրով՝ սահմանվելով մինչև 2026 թվականի հունիսի 04-ը ներառյալ, սակայն մինչ օրս

աշխատանքները Կապալառու կազմակերպության կողմից ամբողջությամբ չեն կատարվել, իսկ շինարարական աշխատանքների կատարման ժամկետն ավարտվել է:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ին պատկանող շենքի 1-ին, 2-րդ, և 3-րդ հարկերի ընթացիկ վերանորոհման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՀՀՓԿ-ԳՀԱՇՁԲ-06/26 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

Պայմանագրի 1.3.-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրի 3.1.4.-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե. Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Հիմք ընդունելով վերոնշյալ կարգավորումները հայտնում ենք, որ Ձեր ընկերության կողմից թույլ է տրվել պայմանագրային պարտավորությունների խախտում, մասնավորապես համաձայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված արձանագրության՝ 2026 թվականի հունիսի 05-ի դրությամբ Պայմանագրով սահմանված աշխատանքների ընդհանուր ծավալից փաստացի կատարվել են ստորև նշված ծավալով աշխատանքները.

Հ/Հ	*Անվանում*	*Չ/Մ*	*Քանակ*	*Միավոր արժեք ՀՀ դրամ*	*Ընդամենը ՀՀ դրամ*	*Փաստացի կատարված աշխատանքները 05.06.2026թ.-ի դրությամբ*	*ՎԳ ըստ պայմանագրի 5.1 կետի ՀՀ դրամ*
	1-ին հարկ						
1	Պատերի հղկում ծեփամածիկով և ներկում լատեքսային ներկով (ներառյալ դռան և պատուհանի շեպերը)	քմ	857.39	2250	1,929,122	193.4	303885

2	Աստիճանների տակ մետաղական հեծանների յուղաներկում	քմ	9.11	3600	32,782	7.5	18855
3	Աստիճանների կողային հատվածների 31*17սմ չափսերի բազալտից շրիշակների պատրաստում	հատ	4.00	1350	5,400	4	3771
4	Աստիճանների կողային հատվածների 32*16սմ չափսերի բազալտից շրիշակների պատրաստում	հատ	4.00	1350	5,400	4	3771
5	Աստիճանների կողային հատվածների 30*15սմ չափսերի բազալտից շրիշակների պատրաստում	հատ	20.00	1350	27,000	20	18855
6	Պենոպլաստե քիվի /կառնիզ/ իրականացում	գ/մ	27.30	2250	61,425	35	55309
7	Ցեմենտ-ավազյա հարթեցնող շերտ 5սմ մետաղական Բp-3 ցանցով	քմ	16.80	4050	68,040	8.8	24889
	2-ՐԴ ՀԱՐԿ						
8	Աստիճանների տակ մետաղական հեծանների յուղաներկում	քմ	8.41	5000	42,040	8	29365
9	Աստիճանների կողային հատվածների 30*14սմ չափսերի բազալտից շրիշակների պատրաստում	հատ	11.00	1350	14,850	11	10370
10	Աստիճանների կողային հատվածների 30*15սմ չափսերի	հատ	9.00	1350	12,150	9	8485

	բազալտից շրիշակների պատրաստում						
11	Պենոպլաստե քիվի /կառնիզ/ իրականացում	գ/մ	32.70	2250	73,575	26	40539
	Ընդամենը						518,095

Հիմք ընդունելով վերոնշյալը, և ղեկավարվելով ՀՀՓԿ-ԳՀԱՇՁԲ-06/26 ծածկագրով ընթացիկ վերանորոգման և կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի վկայակոչված կետերով, Պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ Կապալառուի կողմից չեն պահպանվել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված պահանջները, մասնավորապես՝ Պայմանագրով սահմանված ժամկետում չեն իրականացվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները, որի հանգամանքով պայմանավորված Պատվիրատուն միակողմանի լուծում է Կապալառուի հետ կնքված Պայմանագիրը ամբողջությամբ:

Միաժամանակ հաշվի առնելով, որ 2026 թվականի հունիսի 05-ի դրությամբ փաստացի կատարվել են 518,095 (հինգ հարյուր տասնութ հազար զրո իննսունհինգ) ՀՀ դրամի չափով աշխատանքներ, ուստի Պատվիրատուն հաշվանցում է նշված գումարը Կապալառուի կողմից Պայմանագրի միակողմանի ամբողջական լուծման հետևանքով Պատվիրատուին վճարման ենթակա գումարներից, որի արդյունքում Պատվիրատուին վերջնական վճարման ենթակա է՝ 38,382 (երեսունութ հազար երեք հարյուր ութսուներկու) ՀՀ դրամ որպես Պայմանագրով նախատեսված պայմանագիրը լուծելու դեպքում կիրառվող տուգանք և 3,838.2 (երեք հազար ութ հարյուր երեսունութ ամբողջ երկու տասնորդական) ՀՀ դրամ Պայմանագրով կատարման ենթակա աշխատանքները չկատարելու համար նախատեսված տույժ, Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի որակավորման ապահովման գումարը 1,648,840 ՀՀ դրամից հաշվանցման արդյունքում 1,130,745 (մեկ միլիոն հարյուր երեսուն հազար յոթ հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ՝ համաձայն Հրավերի 10.2 կետի, որը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին և Պայմանագրի ապահովման գումարը կազմում է 1,099,226.8 (մեկ միլիոն իննսունինը հազար երկու հարյուր քսանվեց ամբողջ ութ տասներորդ) ՀՀ դրամ՝ համաձայն Հրավերի 10.3 կետի, որը որը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000664» գանձապետական հաշվին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նշվածի կապակցությամբ Պատվիրատու ՀՀ Փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ը դիմել է տուժանքի մասին համաձայնագրերում նշված «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ին՝ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները գանձելու համար, որի անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով

սահմանված պահանջները կիրառելու նպատակով Պատվիրատուն տեղեկատվությունը կտրամադրի ՀՀ Ֆինանսների նախարարությանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ

ԴԱՎԻԹ ՂՈՒԼՅԱՆ

սահմանված պահանջները կիրառելու նպատակով Պատվիրատուն տեղեկատվությունը կտրամադրի ՀՀ Ֆինանսների նախարարությանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ

ԴԱՎԻԹ ՂՈՒԼՅԱՆ